

նաև նստելով երեք ամիս ծովային տաժանելի ճամբորդութենէ մը ետքը ժամանեցին Ալեքսանդրիա (14 օգոստ.), եւ անկէ ալ հասան Կահիրէ(1) :

Պատգամաւորները Կահիրէ հասնելէն մի քանի օր վերջը ներկայացան Բարկուկի եւ յանձնեցին իրենց թագաւորներէն բերած թղթերն ու նուէրները : Եւ որովհետեւ մանուկ թագաւորը մեռած եւ անոր յաջորդած էր աւելի փոքր եղբայրը՝ Հաջի, 1382—1383, որ բոլորովին Բարկուկի տրամադրութեան տակ էր (2), մասնաւոր ժամադրութեամբ մը միասին ներկայացան սուլտանին, եւ խօսք առին որ ուշադրութեան պիտի առնուի իրենց խնդիրը :

Վերջապէ՛ս հնչած էր Լեւոնի փրկութեան ժամը :

1382 սեպտ. 30-ին Բարկուկ իր ներկայութեան հրաւիրելով Արագոնի

(1) Բոնանաս Սապերայի կրկին անգամ դիմելուն յիշատակութիւնը չեմ գտած ճշդ մը, բայց կենթադրեմ որ այսպէս եղած պիտի ըլլայ. վառն գի Դարդել (եր. 180) բացարձակ կերպով կրսէ քէ Բ. Սապերա իրենց խմբին միացած եւ միասին նամբորդած է Բարսելոնայէն մինչեւ Կահիրէ. մինչդեռ վերը (եր. 68) յառաջ բերուած 3 հոկտ. 1380 քուակիր վաւերագրէն գիտեմք, որ Բ. Սապերա նոյն քուականին գացած է Եգիպտոս : Ուրեմն երկու անգամ նամբորդած է Սապերա :

Այս ենթադրութիւնս կը հաստատուի նաեւ անով, որ Դարդել մի քանի անգամներ կը կրկնէ քէ Բ. Սապերա ձեռները դասարկ՝ առանց ո՛ր եւ է ընծայի ներկայացաւ սուլտանին եւ դիտարկութիւն կրեց Բարկուկէն : Նոյն բանը կրսէ նաեւ *Cronicas de los reyes de Castilla*, հս. Բ, եր. 135, նեւեւեղ բառերով. « Արագոնի դեսպանները սուլտանին ընծայելու համար գոհարեղեններ չուցին, այլ միայն իրենց ի նդրագիրը » : Բայց վերը մեջբերուած երկու վաւերագրերն ալ առանց հակասակը կը հաստատեն, յայտնապէս յիշելով որ Արագոնի բագաւորն իր դեսպաններուն ձեռնովը սուլտանին եւ Բարկուկին կը *դրկէ իր* « գոհարեղեններէն մի քանի փոքր նուէրներ » : Արդ՝ կա՛մ վաւերագրերը կեղծ են, եւ կամ Դարդել ու Կատսիլլայի ժախճակագիրը սխալօք, եքէ Բ. Սապերա երկու անգամ չէ գացած Եգիպտոս, — երկրորդին՝ իրապէ՛ս պարսպ ձեռներով, առանց ընծայի :

(2) Հաջի վեց տարեկան էր երբ յաջորդեց իր եղբորը : Բարկուկ, օգտուելով առիթէն, տասնութ ամիս վերջը տապալեց Մամլուքներու առաջին հարսութիւնը, սուլտանն ամուսնեց եւ ինք բարձրացաւ զանր (1383—1389), հիմնելով Մամլուքներու երկրորդ հարսութիւնը : Դարդել կը սխալի երբ կրսէ (եր. 185), քէ « սպանին գտուքանն եւ բազմեցուցին ի ճշդի նորա զմեծ իշխանն Բարկուկ » :